ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսիյանի

Մասնակցությամբ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Մկրտչյանի (լիազորագիր տրված՝ 27.05.2019թ)

Քննելով ՀՀ ոստիկանության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏԳԱԲ-50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի կողմից 22.05.2019թ. ներկայացված և 23.05.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/34 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տեխնոֆորում» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 22.05.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեխնոֆորում» ՍՊԸ-ն մասնակցության փաթեթ է ուղարկել ՀՀ ոստիկանության համապատասխան «ՀՀՈԳՀԱՊՁԲ-2019-ՀՏ/ԳԱԲ-50» մրցույթին մասնակցելու համար և միայն թիվ 8 չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից՝ համաձայն գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության:

Հանձնաժողովը ֆինանսական միջոցները ստուգելու նպատակով հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Ըստ ՀՀ ՊԵԿ-ի եզրակացության «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի ակտիվները կազմել են 7 268 120 դրամ, իսկ պարտավորությունները՝ 123 334 403 դրամ:

Հանձնաժողովը արձանագրել է նշված խնդիրը և հնարավորություն է տվել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընկերության կողմից կատարվել է համապատասխան շտկում, որի համաձայն պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքին:

Գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից սահմանված մեկ օրվա ժամկետում շտկվել է անհամապատասխանությունները, սակայն «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը մերժվում է:

Ընկերությունը գտնում է, որ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը բավարարում է Գնումների մասին օրենքի 6 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի պահանջին, իսկ պատվիրատուն հայտը մերժելով խախտել է ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշման 47 և 48 կետերի պահանջները, քանի որ համապատասխան շտկումը ներկայացնելուց հետո նշված կետերի համաձայն Ընկերության հայտը չէր կարող մերժվեր:

Վերը նշվածով պայմանավորված, Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն՝

դադարեցնել և/կամ չեղյալ համարել գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ ընդունված «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.05.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ ոստիկանության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ ոստիկանությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ԳԲՔԱ-ՆԳ-2019/34 բողոքի շրջանակներում 29.05.2019թ. գրությամբ ներկայացրել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏ/ԳԱԲ-50» ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.05.2019թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏ/ԳԱԲ-50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ***<u>05.08.2019թ.</u>*** հայտ է ներկայացրել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն Ընթացակարգի

8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 7 268 120 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 123 334 403 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ մասի կայացված որոշմամբ հիմք ընդունելով 14.05.2019թ. ՊԵԿ-ի կողմից ստացված հարցման պատասխանը Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար: 16.05.2019թ. Ընկերության կողմից ներկայացվել է շտկում, համաձայն որի վերջինիս կողմից շտկվել է ակտիվների և պարտավորությունների անհամապատասխանությունը և ընդունվել է: Սակայն վերջինիս հայտը մերժվում է:

5. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.05.2019թ. թիվ 1383 գրության համաձայն՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ընկերության կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկներով հայտարարագրված ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 2018 թվականին համապատասխանաբար կազմել է 54 915 157 ՀՀ դրամ և 1 986 125 ՀՀ դրամ:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի 22.05.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏ/ԳԱԲ-50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով ***«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ***՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն

կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ ***չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է***: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: ***Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:***

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: ***«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ***, ***այնպես էլ***

կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

48.Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:***

Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏ/ԳԱԲ-50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ***05.08.2019թ.*** հայտ է ներկայացրել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/-ՀՏ/ԳԱԲ-50» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է

սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 7 268 120 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 123 334 403 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2019թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ մասի կայացված որոշմամբ հիմք ընդունելով 14.05.2019թ. ՊԵԿ-ի կողմից ստացված հարցման պատասխանը Ընկերությանը տրվել է մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար: 16.05.2019թ. Ընկերության կողմից ներկայացվել է շտկում, համաձայն որի վերջինիս կողմից շտկվել է ակտիվների և պարտավորությունների անհամապատասխանությունը և ընդունվել է: Սակայն վերջինիս հայտը մերժվում է:

Այսպիսով արձանագրում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-20149/34 բողոքի քննության շրջանակներում Ընկերության կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.05.2019թ. թիվ 1383 գրությունը, որի համաձայն՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ընկերության կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկներով հայտարարագրված ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 2018 թվականին համապատասխանաբար կազմել է 54 915 157 ՀՀ դրամ և 1 986 125 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ 4-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս է եղել պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից: Ընկերությանը Կարգի 47-րդ կետի համաձայն, ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, որը ըստ գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության Ընկերության կողմից շտկվել է, սակայն գնահատող հանձնաժողովը մերժել է վերջինիս հայտը:

Միևնույն ժամանակ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.05.2019թ. թիվ 1383 գրության համաձայն՝ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ընկերության կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկներով հայտարարագրված ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 2018 թվականին համապատասխանաբար կազմել է 54 915 157 ՀՀ դրամ և 1 986 125 ՀՀ դրամ:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում ***շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:***

Այսպիսով, արձանագրում եմ, որ Ընկերությունը բավարարում է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով և Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ պահանջվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնատատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի խախտմամբ:

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Տեխնոֆորում» ՍՊԸ-ի կողմից 22.05.2019թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019/ՀՏ/ԳԱԲ-50» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել նիստի թիվ 3 արձանագրությամբ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**